ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

,, 08 ,, դեկտեմբերի 2014թ. N 264-Ա

<<ՍԵՎԱՆԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ>> ՓԲԸ ՏՆՕՐԵՆ ՎԱՐՈՒԺԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ
ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և 226-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Սևանի հիվանդանոց>> ՓԲԸ տնօրեն Վարուժան Մանուկյանի նկատմամբ կիրառել <<Խիստ նկատողություն>> կարգապահական տույժ՝ ծառայողական լիազորությունները վերազանցելու համար:

Հիմք՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահական բաժնի վարիչ Անուշ Պողոսյանի զեկուցագիրը:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ